ԱՍՏԾՈ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՄ ՁԱԽՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հրաշալի Ողորմություն - Մաս 4

Մեր անձնական ձախողությունների պատճառները
Պետրոսի երեք սխալները

1. Մենք գերագնահատում ենք մեր կարողությունները

«Պետրոսը նրան ասաց. «Թեկուզ բոլորն էլ քեզանով գայթակղվեն, ես երբեք չեմ գայթակղվի»:» Մատթեոս 26:33

2. Մենք վախենում ենք ուրիշների անհավանությունից

«Պետրոսը նստած էր դրսում՝ գավթում: Մի աղախին նրան մոտեցավ և ասաց. «Դո՛ւ էլ գալիլեացի Հիսուսի հետ էիր»: Նա բոլորի առաջ ուրացավ և ասաց. «Չգիտեմ, թե ի՛նչ ես խոսում:» Մատթեոս 26:69-70

3. Մենք խոսում ենք առանց մտածելու

«Այդ ժամանակ նա սկսեց անիծել ու երդվել. «Այդ մարդուն չեմ ճանաչում»: Եվ իսկույն աքաղաղը կանչեց:» Մատթեոս 26:74

Ի՞նչ պետք է անեմ, երբ որ ձախողել եմ

Երեք բան, որ Պետրոսը ճիշտ արեց

1. Ողբամ

«Եվ Պետրոսը հիշեց Հիսուսի այն խոսքը. «Աքաղաղը դեռ չկանչած՝ երեք անգամ կուրանաս ինձ»: Եվ դուրս ելնելով՝ դառնապես լաց եղավ:» Մատ 26:75

2. Թույլ տալ, որ իմ աջակից խումբը ինձ օգնել

(Զատիկի առավոտ)« Մարիամը գնաց և պատմեց Հիսուսի հետ եղածներին, որ սգում էին ու լաց լինում:» Մարկոս 16:10

(Զատիկի առավոտ)«Նույն օրը՝ շաբաթվա առաջին օրվա երեկոյան, երբ հրեաներից վախի պատճառով աշակերտները հավաքվել էին մի տեղ և դռները փակել, Հիսուսը եկավ, նրանց մեջտեղում կանգնեց և ասաց նրանց. «Խաղաղությո՛ւն ձեզ»:...աշակերտներն ուրախացան, որ Տիրոջը տեսան:» Հովհաննես 20:19-20

«Ութ օր հետո աշակերտները դարձյալ ներսում էին.» Հովհաննես 20:26

3. Հանձնվեմ Աստծո ողորմությանը

«Օրհնյալ է Աստված...որ իր առատ ողորմությամբ մեզ վերստին ծնեց կենդանի հույսի համար՝ մեռելներից Հիսուս Քրիստոսի հարությամբ:» Ա Պետրոս 1:3

«Ձեր ամբողջ հոգսը նրա վրա՛ գցեք, որովհետև նա ձեզ հոգ է տանում:»
Ա Պետրոս 5:7

Ի՞նչ է անում Հիսուսը մեր ձախորդության հետ

«Սիմո՛ն, Սիմո՛ն, ահա սատանան ուզեց ձեզ ցորենի պես մաղել: Բայց ես քեզ համար աղոթեցի, որ քո հավատը չպակասի. իսկ դու երբ այն վերագտնես, եղբայրներիդ հաստատո՛ւն պահիր»: Ղուկաս 22:31-32

1. Նա չի զարմանում

*«Որովհետև նա գիտի մեր կազմվածքը, հիշում է, որ հող ենք մենք:»*Սաղ 103:14

2. Նա աղոթում է մեզ համար

«Հիսուսը կարող է փրկել նրանց, ովքեր իր միջոցով մոտենում են Աստծուն, որովհետև միշտ կենդանի է, որպեսզի նրանց համար բարեխոս լինի:» Եբր 7:25

3. Նա վստահում է մեզ

«Երբ դառնաս, եղբայրներիդ հաստատիր:» Ղուկաս 22:32

«Հրեշտակը ասաց նրանց. «...գնացե՛ք, նրա աշակերտներին ու Պետրոսին ասացե՛ք, որ նա ձեզանից առաջ գնում է Գալիլեա. այնտեղ կտեսնեք նրան, ինչպես որ ձեզ ասել էր:» Մարկոս 16:6-7

4. Նա ողորմում է մեզ, երբ մենք ընկած ենք

«Երբ ցամաք ելան, տեսան վառած ածուխի մի կրակատեղ, վրան՝ ձուկ ու հաց դրված: Հիսուսն ասաց նրանց. «Բերե՛ք այն ձկներից, որ հիմա որսացիք:»
Հովհաննես 21:9-10

5. Նա օգտագործում է մեր ձախորդությունները իր եկեղեցին կառուցելու համար

«Երբ դառնաս, եղբայրներիդ հաստատիր:» Ղուկաս 22:31-32

«Երբ ճաշեցին, Հիսուսը Սիմոն Պետրոսին ասաց. «Սիմո՛ն, Հովնանի՛ որդի, սիրո՞ւմ ես ինձ ավելի, քան դրանք»: Պետրոսը նրան ասաց. «Այո՛, Տե՛ր, դու գիտես, որ ես քեզ սիրում եմ»: Նրան ասաց. «Արածեցրո՛ւ իմ գառներին»: Երկրորդ անգամ նրան հարցրեց. «Սիմո՛ն, Հովնանի՛ որդի, սիրո՞ւմ ես ինձ»: Պետրոսը նրան պատասխանեց. «Այո՛, Տե՛ր, դու գիտես, որ ես քեզ սիրում եմ»: Նրան ասաց. «Արածեցրո՛ւ իմ ոչխարներին»: Երրորդ անգամ հարցրեց նրան. «Սիմո՛ն, Հովնանի՛ որդի, սիրո՞ւմ ես ինձ»: Պետրոսը տրտմեց, որ երրորդ անգամ հարցրեց իրեն՝ «Սիրո՞ւմ ես ինձ»: Եվ պատասխանեց նրան. «Տե՛ր, դու ամեն ինչ գիտես. դու գիտես, որ ես քեզ սիրում եմ»: Հիսուսն ասաց նրան. «Արածեցրո՛ւ իմ ոչխարներին:» Հովհաննես 21:15-17

«Ես էլ քեզ ասում եմ, որ դու Պետրոս ես, և այդ վեմի վրա եմ կառուցելու իմ եկեղեցին, և դժոխքի դռները նրան չեն կարողանա հաղթել:» Մատթեոս 16:18

Հաջորդ Կիրակի:
ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԵԼՆ Է
Հովիվ Սարօ Խաչիկեան